

Արձանագրություն N7

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

06.02.2015թ. նիստի

Օրակարգ

1. 2014-2015 ուս. տարվա 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
3. Պետական քննության հարցաշարի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 24-ը:

1. ԼՍԵՅԻՆ՝ Առաջարկվեցին անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածությունները Անգլիական բանասիրության, Ռոմանական բանասիրության և Գերմանական բանասիրության ամբիոններից:
ՈՐՈՇԵՅԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեցին հետևյալ ուսանողների թեկնածությունները՝ Աղաքարյան Անահիտ /2-րդ կուրս, անգլիական բանասիրության ամբիոն - Վիլյամ Սարոյանի անվան կրթաթոշակ/, Ղազարյան Մարիա /մագիստրատուրա, 2-րդ կուրս, ռոմանական բանասիրության ամբիոն - Ֆրանց Վերֆելի անվան կրթաթոշակ/, Մարտիրոսյան Մարիամ /2-րդ կուրս, գերմանական բանասիրության ամբիոն - Հրաչյա Աճառյանի անվան կրթաթոշակ/:
2. ԼՍԵՅԻՆ՝ Ֆակուլտետի դեկանը ներկայացրեց, որ 2014-2015 ուս. տարվա 1-ին կիսամյակի արդյունքներն ընդհանուր առմամբ վատ չեն, լուծարքներ են հանձնել մոտ հիսուն ուսանող, մեծ մասը հայող լեզվից: Հավանական է, որ երկու լուծարքների արդյունքում մեծ մասը կհանձնեն քննությունները: Դեկանը ևս մեկ անգամ հիշեցրեց ամբիոնի վարիչներին տեղեկացնել դասախոսական կազմին առանց ստուգման գրքույկի չզննահատել ուսանողին: Ավելացրեց, որ, ցավոք, կան դասախոսներ, որոնք պատշաճ ուշադրություն չեն դարձնում հաճախումներին, չեն հանում բացակայությունների համար նախատեսված երկու միավորը, եթե ուսանողը չի հաճախում դասերին:
3. ԼՍԵՅԻՆ՝ Դեկանը խնդրեց ամբիոնների վարիչներին ներկայացնել հարցաշարերի վիճակը և եթե լրամշակումների կարիք չկա՝ հարցաշարերը ներկայացնել ֆակուլտետի գիտխորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ամբիոնների վարիչները խնդրեցին հարցաշարերի հաստատումը կատարել հաջորդ նիստին, քանի որ ուզում են որոշ փոփոխություններ մտցնել հարցաշարերում.

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Պետական քննության հարցաշարերի հաստատումը հետաձգել մինչև գիտխորհրդի հաջորդ նիստը:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշոցին՝

- Կրթության և գիտության նախարարության անգլերենից և ֆրանսերենից Մարդու իրավունքների եվրոպական դատարանում դատավորի ընտրության մրցութային հանձնաժողովում աշխատելու համար առաջարկել Մարկուսի Ոսկանյանի, Ռուզաննա Մելքոնյանի /անգլերեն/ և Անահիտ Մեսրոպյանի /ֆրանսերեն/ թեկնածությունները:
- Հաստատել Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասպիրանտ Սյուզաննա Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեման:
- Հաստատել Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ Տաթևիկ Նաջարյանի թեկնածուական ատենախոսության թեման:
- Հաստատել Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ Նարե Զաբաղյանի թեկնածուական ատենախոսության թեման:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

6 փետրվարի 2015 4թ.